

«Նշանավոր կույր գործիչներ»

Սեմինար

Նոյեմբերի 13-ին՝ Կույրերի միջազգային օրը, Հայաստանի ազգային գրադարանի՝ կույրերի և տեսողական խնդիր ունեցողների «Արև» ընթերցասրահում անցկացվեց սեմինար՝ «Նշանավոր կույր գործիչներ» խորագրով: Թեման ընտրվել էր «Արևի» ընթերցողների խնդրանքով:

Ընթերցասրահի աշխատակից Կարինե Հովհիկյանը ներկայացավ տեսողական խնդիրներ ունեցող մշակույթի և գիտության նշանավոր գործիչների մասին զեկույցով: Հոմերոս, Մթիվի Ուանդեր, Անդրեա Բոչչելլի, Ռեյ Չարլզ, Յոհան Մեֆաստիան Բախ, Նիկոլայոս Տիգրանյան, Ալբերտ Մուշեղյան, Էմիլ Ավագյան, Արտակ Բեգլարյան... մարդիկ, որոնք լավագույններից են իրենց ոլորտում: Մարդիկ, որոնք կայացել ու իրենց հետքն են թողել տարբեր ասպարեզներում՝ կանգ չառնելով ոչ մի դժվարության առաջ:

«Արև»-ի ընթերցողների համար Ազգային գրադարանը պարբերաբար է կազմակերպում դասընթացներ, սեմինարներ, քննարկումներ, գրական ընթերցումներ: Ընթերցասրահի շուրջ երեք տասնյակ ընթերցողները տարբեր տարիքի ու նախասիրությունների տեր մարդիկ են: Գեղարվեստական գրականություն ընթերցելուց բացի նրանք այստեղ կարող են լսել ընթերցասրահի մի քանի տասնյակ խոսող գրքերն ու ձայերիզները կամ էլ տեղեկատվություն ստանալ ամենամյա պարբերականությամբ լույս տեսնող բրայլի գրատիպով բյուլետեններից:



Ավելի քան տասը տարի գործող ընթերցասրահը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի մշակած «Արև» համակարգի շնորհիվ ապահովում է նաև տեսողական խնդիր ունեցողների հաղորդակցումը համակարգչի հետ: Ծրագիրը նաև գրաֆիկական, երաժշտական գրադարաններ և «Շախմատային խաղընկեր» բաժիններ ունի եւ հայերենից բացի կարող է աշխատել ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն ու այլ լեզուներով: